

ԱՅԳԵՊԱՆ

(ՆԻԷՐ 1500 ԱՄԵԱՅ ՀԱՅ ՏԱՌԻՆ)

Երբ ողջ երկիրը երաշտից այրուում
Եւ դաժան սովն էր գոնեքը բախում,
Երբ մարդիկ անոյժ գոռում էին գոչում
Նրանց ձայները ձեզ էին կանչում...

Իսկ դու քաջ հերոս, մշակ-այգեպան,
Շունչ, հոգի տըւիր դաշտերին խոպան.
Բուռն եռանդով սուրբ գործի կպար
Մեր մութ աշխարհին լոյս տալու համար...

Երբէք քեզ շրնկճեց ոչ բուր ու բորան
Եւ ոչ արևը կիզիչ ամառւան.

Կուչ ու ձիգ գալով, սև օր քաշելով
Դո՛ւ աշխատում էիր քեզ միշտ յոյս տալով...

Անցան տարիներ դառն տանջանքի
Տեսար պտուղը քո աշխատանքի...
Կարծես կրծքիդ տակ վարդեր բացւեցան,
Մէջքիդ վրայից տարիներն ընկան...

Եւ դո՛ւ ժպտացիր անմեղ մանկան պէս
Մտրումդ փթթեց երազներ պէս-պէս...

Ու Գեզ հարց տւիր. «Արդեօր աշխարհում
Ամեն որ ինձպէս ուրախ է ապրում»:

Քո այդ ժպտով մենք է՛լ խնդացինք,
Քո աշխատանքով մենք է՛լ ապրեցինք.
Եյժմ սիրելի մեր քաջ այգեպան
Թո՛ղ Քո անունը յիշւի յաւիտեան...

Եյսօր Քո տօնն է ազնիւ վաստակի.

Տօնը Քո վսեմ մեծ աշխատանքի.

Հանդիստ ու դադար Սուրբ ոսկորներիդ,

Թո՛ղ անմահ մնայ քո վսեմ հոգիդ...

Վարսիկ

Աշակերտուհի VI դաս, Թիֆ, Յով. Մարիամ, Ուսուցիչ.